ՄԵՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, *Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, 190 +8 էջ (նկ.):*



2015 թ. մարտի 11-ին լրացավ XIX-XX դդ. հայ կերպարվեստի ռեալիստական ուղղության ականավոր ներկայացուցիչ Փանոս Թերլեմեզյանի (1865-1941) ծննդյան 150-ամյակը: Այս առիթով ՀՀ ԳԱԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել արվեստագիտության թեկնածու Մերի Կիրակոսյանի սույն մենագրությունը (գիտական խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյան):

Կուռ ու տրամաբանական է մենագրության կառուցվածքը: Բովանդակությանը համապատասխան՝ այն բաղկացած է երեք գլուխներից:

Առաջինը՝ «Փանոս Թերլեմեզյանի կյանքի ուղին», *ունի երեք ենթագլուխ: Առաջինում ներկայացված են նկարչի կենսագրության կարևոր էջերը՝ ուսումնառությունը Պետերբուրգում և Փարիզում, բանտարկության և պանդխտության տարիները, հայրենադարձության շրջանը: Երկրորդ ենթագլխում Մ. Կիրակոսյանն առաջին անգամ կազմել է լիակատար ժամանակագրությունն այն ցուցահանդեսների (թվով՝ 47), որոնց մասնակցել է Փ. Թերլեմեզյանը (Փարիզ, Թիֆլիս, Կ. Պոլիս, Մյունխեն, Երևան, Վենետիկ, Նյու Յորք, Մոսկվա): Սրանցից մի քանիսն անհատական պատկերահանդեսներ էին (Նյու Յորք, Ֆրեզնո, Երևան, Թիֆլիս, Մոսկվա): Առանձին ենթագլուխ է հատկացված հայ արվեստի նվիրյալների՝ Փ. Թերլեմեզյանի և Կոմիտասի մշակութային շփումներին և փոխառնչություններին:*

Երկրորդ գլխում՝ «Փանոս Թերլեմեզյանի ստեղծագործությունը», *քննության են առնված նկարչի վաղ (1900-1915), միջին (1916-1927) և խորհրդային շրջանների (1928-1940) ստեղծագործությունները: Հեղինակն առանձին ենթագլուխ է հատկացրել դիմանկարին և նատյուրմորտին Թերլեմեզյանի արվեստում: Անդրադառնալով Թերլեմեզյանի վաղ շրջանի գործերին՝ Մ. Կիրակոսյանը գիտական շրջանառության մեջ է դրել Էջմիածնի թանգարանում գտնվող՝ XVII դ. իսպանացի գեղանկարիչ Էստեբան Մուրիլյոյի «Անարատ հղություն» կտավի կրկնանկարը (ստեղծված 1904-ին): Նա Էջմիածնի թանգարանում հայտնաբերել է նկարչի երկու բնանկարները՝ «Սևան» (1907) և «Վանի բերդը» (1913): Մ. Կիրակոսյանը գիտական շրջանակներին է ներկայացնում նաև իր հայտնաբերած էտյուդները. «1905-ին Դսեղ կատարած ճանապարհորդության ժամանակ Թերլեմեզյանը ստեղծում է մի շարք բնանկարներ, որոնցից «Դսեղի շրջակայքը» (1905), «Հովհաննես*

Թումանյանը որսի ժամանակ» (1905), «Մուշեղ Թումանյանը Սբ. Գրիգոր աղբյուրի մոտ» (1905) էտյուդներն այժմ գտնվում են Հ. Թումանյանի տուն-թանգարանում» (էջ 78-79):

Մ. Կիրակոսյանը Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում ի հայտ է բերել Փ. Թերլեմեզյանի՝ հայրենի Վան վերջին այցելության ժամանակ ստեղծած՝ Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու բարձրաքանդակների արտանկարները, որոնք մինչ այժմ կորած էին համարվում: Նա գրում է. «Աղթամարյան ածխանկարները Մատենադարանի գրադարանի ալբոմների բաժնի խառը դասավորված քարտարանում գրանցված են «397» համարի տակ: Նկարները կատարված են ալբոմային յոթ թերթերի վրա, ամեն մեկում ներկայացված է 1-3 միավոր: Դրանցից 6-ի ալբոմային միջին մեծությունը հավասար է 22x30 սմ, իսկ մեկն ավելի փոքր է՝ 22x15 սմ: Այդ տախտակներից երկուսը կազմված են 1914-ի սեպտեմբերին (մեկը՝ ամսի 25-ին, իսկ մյուսը՝ 29-ին), մնացածները՝ հոկտեմբերին, առանց տվյալ ամսաթվի հիշատակման» (էջ 84):

«Դիմանկարը և նատյուրմորտը Փանոս Թերլեմեզյանի արվեստում» ենթագլխում հեղինակը գրում է. «Մեր հետազոտության ընթացքում Ավ. Իսահակյանի տուն-թանգարանում գտանք Թերլեմեզյանի վրձնին պատկանող «Աղջկա դիմանկար» (անթվակիր) աշխատանքը, որը, ելնելով աշխատանքի դեղնադարչնագույն երանգավորումից և կատարման եղանակից՝ մոտավոր թվագրվել է 1905 թվականով: Թերլեմեզյանը թե՛ արտասահմանում և թե՛ հայրենիքում մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների, սակայն վերջիններիս ցանկերում այս գործը չկա: Դիմանկարի մասին տեղեկություններ չգտանք նաև Ե. Մարտիկյանի մենագրության մեջ» (էջ 112): Մ. Կիրակոսյանը ճշտել է «Հայուհի» դիմանկարի ստեղծման տարեթիվը, պարզել «Գաղթական» կտավի գտնվելու վայրը:

***Երրորդ գլխում՝ «Փանոս Թերլեմեզյանի գրական, հասարակական, հայրենասիրական գործունեությունը»** վերնագրով, հեղինակը խոսում է արվեստագետի գրական ժառանգության մասին, տալիս Փ. Թերլեմեզյանի հասարակական գործունեության լիակազմ ժամանակագրությունը, անդրադառնում նկարչի հասարակական և մշակութային բնույթի հանրային աշխատանքներին և նրա մասնակցությանը 1915 թ. Վանի հերոսամարտին: Մ. Կիրակոսյանը ներկայացնում է նաև Թերլեմեզյանի՝ քչերին հայտնի գրական ժառանգությունը: Նկարիչը գրական 15 հրապարակումներ ունի, որոնցից շատերում առաջադրված են արվեստագետին հուզող ինչպես ստեղծագործական, գեղարվեստական ու գեղագիտական, այնպես էլ ազգային՝ հասարակական ու քաղաքական խնդիրներ:*

Աշխատության մեջ, որը շարադրված է արխիվային հարուստ նյութի հիման վրա, տեղ է գտել նաև Փ. Թերլեմեզյանի մասին առկա գրականության լիակատար ցանկը: Նշենք, որ մենագրությունը հրատարակվել է ՀՀ նախագահի հովանու ներքո իրականացվող՝ երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ:

ԱՍԱՏՐՅԱՆ Ա. Գ.
Արվեստագիտության դոկտոր